ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» օգոստոսի 2021 թվական N 918- Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՈՌՈԳՄԱՆ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ՏԵՂԱԴՐԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս գտնվող տարածքներում 2020 թվականին ոռոգման կաթիլային համակարգեր տեղադրած հողօգտագործողներին կատարած ծախսերի մասնակի սուբսիդավորման ծրագիրը՝ (այսուհետ՝ ծրագիր) համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել ծրագրի համակարգման հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Ծրագրի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
2021 թվականի _____ ___-ի
N ____ - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՈՌՈԳՄԱՆ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ՏԵՂԱԴՐԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս գտնվող տարածքներում ոռոգման կաթիլային համակարգ տեղադրած հողօգտագործողներին կատարած ծախսերի մասնակի սուբսիդավորման ծրագրի նպատակն է ֆինանսական աջակցություն տրամադրել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով հակառակորդի վերահսկողության տակ անցած տարածքներում ոռոգման կաթիլային համակարգեր տեղադրած ֆիզիկական և իրավաբանական անձանց:

2. Սույն ծրագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***մասնակի սուբսիդավորում՝ (այսուհետ՝ սուբսիդավորում)*** հակառակորդի վերահսկողության տակ անցած տարածքներում ոռոգման կաթիլային համակարգ տեղադրած անձանց տրամադրվող ֆինանսական միջոցներ.

2) ***հայտատու՝*** սուբսիդավորում ստանալու նպատակով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) դիմած 2020 թվականի պատերազմական գործողությունների հետևանքով հակառակորդի վերահսկողության տակ անցած տարածքներում 2020 թվականին ոռոգման կաթիլային համակարգ տեղադրած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով բազմամյա տնկարկների, ծխախոտի, բանջարաբոստանային կուլտուրաների և այլ միամյա մշակաբույսերի մշակությամբ զբաղվելու նպատակով ոռոգման կաթիլային համակարգ տեղադրելու համար պետական աջակցությունից չի օգտվել:

2. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Նախարարությունը համակարգում և վերահսկողություն է իրականացնում ծրագրի իրականացման գործընթացի նկատմամբ:

4. Սույն ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել հայտ՝ Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 9-ի «Արցախի Հանրապետությունում ոռոգման նպատակով հողօգտագործողներին աջակցման ծրագիրը հաստատելու մասին» N 201-Ա որոշմամբ հաստատված

աջակցության համապատասխան, իսկ 1 200 000 ՀՀ դրամի և անհատույց տրամադրվող գումարի տարբերությունը տրամադրվում է անտոկոս փոխառության տեսքով՝ Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից:

5. Սույն ծրագրի 4-րդ կետով սահմանված սուբսիդավորումը ստանալու նպատակով հայտատուները մինչև 2021 թվականի սեպտեմբերի 15-ը նախարարություն են ներկայացնում հայտ համաձայն N 1 ձևի՝ կցելով գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի (այսուհետ՝ վկայական), իսկ վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի (ծխախոտի, բանջարաբոստանային և այլ միամյա մշակաբույսերի մշակությամբ զբաղվող հայտատուներին հողատարածքը չպատկանելու դեպքում՝ սեփականատիրոջ, համասեփականատիրոջ կամ վարձակալի թույլտվությունը) և անձնագրի պատճենները, համապատասխան շրջանի վարչակազմի կամ համայնքի ղեկավարի, կամ համայնքը սպասարկող գյուղատնտեսի կողմից տրամադրված տեղեկանք՝ որը կհավաստի համապատասխան կուլտուրայով հողատարածքի մշակության և ոռոգման կաթիլային համակարգի տեղադրման փաստը, նախագծանախահաշվային փաստաթղթերը:

6. Սույն որոշման N 2 հավելվածով հաստատված համակարգման հանձնաժողովը հայտերը ընդունելուց հետո, մեկամսյա ժամկետում ուսումնասիրում է ներկայացված հայտերի հավաստիությունը և տալիս եզրակացություն:

7. Դրական եզրակացություն ստացած հայտատուների հետ նախարարությունը կնքում է համապատասխան պայմանագրեր և մեկ տարվա ընթացքում հատկացնում համապատասխան ֆինանսական միջոցներ (հայտատուի կողմից հայտում ներկայացված աշխատանքները այլ ընկերությունների կողմից իրականացված լինելու դեպքում սույն կետով նախատեսված պայմանագիրը կարող է կնքվել եռակողմ):

8. Ֆինանսավորումն իրականացվում է Արցախի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներով:

9. Սուբսիդավորման համար պարտադիր պայման է հանդիսանում մեկ կուլտուրայի հաշվով հողատարածքի նվազագույնը 0,5 հեկտար մակերեսի առկայությունը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

Ձև N 1
Արցախի Հանրապետության
էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն

ՀԱՅՏ

Դիմող _____
(ֆիզիկական կամ իրավաբանական անձ)
_____
Բնակության վայրը (գտնվելու վայրը),
հեռախոսահամարը _____
Անձնագրի և սոցիալական քարտի կամ
հանրային ծառայությունների համարանիշի համարը _____
Պետական գրանցման վկայականի համարը _____
Գործունեության իրականացման վայրը _____
Ոռոգման կաթիլային համակարգը տեղադրվել է _____
_____ համար
(մշակվող կուլտուրայի տարիքը, տեսակը)
_____
Ոռոգման կաթիլային համակարգի տեղադրման
նախագծանախահաշվային արժեքը _____
Հայտին կից ներկայացվում են՝
1._____
2._____
3._____
4._____
5._____
6._____

Լրացուցիչ տեղեկություններ_____
_____
_____

_____ _____
(անուն,ազգանուն) (ստորագրություն)

«____» _____ 20___ թ.

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2021 թվականի _____ ___-ի
N ____ - Ա որոշման

Կ Ա Զ Մ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՈՌՈԳՄԱՆ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ՏԵՂԱԴՐԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարի տեղակալ՝ Վիլեն Ավետիսյան (հանձնաժողովի նախագահ)
2. Արցախի Հանրապետության ջրային կոմիտեի աշխատակազմի ոռոգման համակարգերի բաժնի պետ՝ Վլադիմիր Բալայան (հանձնաժողովի անդամ)
3. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի պետ՝ Սերգեյ Սարգսյան (հանձնաժողովի անդամ),
4. Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետ՝ Գագիկ Բաղդասարյան (հանձնաժողովի անդամ),
5. Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի հողօգտագործման ծրագրերի բաժնի պետ՝ Արմեն Աբրահամյան (հանձնաժողովի անդամ):

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***